## 110. ՔՅԱՍԻԲԻ ՏՂԵՆ ՈՒ ՋԱԼ ԾՈ̈ՒԿԸ

*Մի քյա̈սիբ մարթ ա ըլըմ։ Սա մի տըղա ունըի, մըհել մի կընիկ։ Սաղ օրը աշխատըմ ա, անչախ ա իրանց հացի փողը ճարըմ։ Մի օր էլ մաննըմ ա, վըեր թաքավըերի կընիկը տըժա̈ր հիվանդ ա. ինչ տեղ ու դա̈րման անըմ են՝ ըլըմ չի։ Քյնա̈ցել են ամենամեծ լոխմանին պիրել են, մտիկ ա արել, ասըել ա. «Սրա̈ դա̈րմա̈նը Ջալ ծկան մըիսն ա, վըեր ուտըի՝ ծըեռաց կըսըղանա»։*

*Թաքավըերը հըրաման ա տվել. «Ով էտ ծո̄ւկը պիրի, իրան քաշովը մին վըեսկի կտամ»։ Էս մարթը հենց ուրխացած կյա̈լիս ա տուն, հըլեյի թե Ջալ ծո̄ւկը ինքը արթեն փռնել ա, էս ա տանըիլ դի թաքավըերի կուշտը։ Կյա̈լիս ա տուն, ասըմ ա. «Ա՛ կընիկ, մի պա̈ն կա, ասըեմ, համա վախըմ եմ մըեր ծըեռոքը կյա̈վըեչ, համա էնքան լա̈վն ա վըեր»։ Ասըմ ա. «Էտ ի՞նչ ա, ասա տըենամ»։ Ասըմ ա. «Թաքավըերի կընիկը հիվանդ ա տժա̈ր, սըհե-սըհե հրաման ա տվել. էքուց ըեխին վըեր եմ ունըմ՝ քընա̈մ ծո̄ւկը փըռնիլ. բալի հըլե մեր բախտը պիրըմ ա, մըենք ենք փըռնըմ. փըռնիլ չենք, հո՛ւ ուտըիլու ծո̄ւկն էլ ա կը պիրենք»։*

*Ըռավըետը քշերով տա̈ մի մեծ թոռն ա վըեր ունըմ, մի պո̄ւճո̈ւրն էլ տըղին ա տալըի, քյնըմ են ծո̄ւկը փըռնիլ։ Հերը իրան մըհար ա մըխելի հեռանըմ, սըկսըմ ա թոռը քցիլը, տղեն էլ իրան մըհար ա թոռը քցըմ։ Տըղեն հըլե առաչի թոռը քցըմ ա թե չէ, Ջալ ծո̈ւկը տո̈ւս ա կյա̈լի։ Ուրխանըմ ա, պաչըմ ա, ուզըմ ա քցի տոպրակը, ծո̈ւկը օքմու ղայդի ղանչանք ա անըմ ասըմ ա. «Ինձ տալ մի թաքավըերին, բրախի՝ ես քեզ շատ օքուտ կըտամ»։*

Էս ընխի մեխկը կյալիս ա, ծո̈ւկը ըլետ քցըմ ա ճուրը ու սկսըմ ա թոռը քցիլը։ Մընչև րուգյու հեր ու տղա թոռն են քցըմ։ Շատ ծուկն են փոնըմ ամըեն չուռա, համա իրանց ասած Ջալ ծուկը պըտահըմ չի։ Ըրուգյունը տուն կյալիս հերը վըեր շատ ասըմ ա. «Բախտ չի ունենք», տըղեն ասըմ ա. «Հայրի՛կ, խի՞ չիռւ-ո ննենք, ես հենց առաջի թոռը քցելուց Ջալ ծուկը տ̈ուս էկավ»։

Ասըմ ա. «Բա ի՞նչ արիր»։ Ասըմ ա. «Օքմու ղայգի հետս խոսցավ, ղանչանք արավ, թե՝ ինձ տանըիլ մի թաքավըրերի կուշտը, րրախի ես քեղ շատ օքուտ կտամ։ Ես էլ բրախեցի»։

Հերը տըղի վըրա կըեղվըմ ա, թակըմ ա ու տանիցը տ̈ուս անըմ. Ասըմ ա. «Ես թաքավըրերին կասեմ՝ քեղ պատժըի, վըեր տու ծո̈ւկը բթել ես, պիրել չես իրան տաս, ըլետ ծովն ես քցել»։

Տըղեն իրանց տանիցը րրախըմ ա փախչըմ։ Սա̈ վըեր մըխեյի բյնըմ ա մի մարթ եգնեն ղի ա տալըի, ասըմ ա. «Կացըի՛, ես էլ եմ կյա̈լի»։ Էս տըղեն կաղնըմ ա էտ մարթը կյա̈լիս ա ասըմ ա. «Պա̈րի օր, ա բալա՛»։ Ասըմ ա. «Աստու պա̈րին»։ Ասըմ ա. «Էս վըե՞րգի ես քյնըմ»։ Ասըմ ա. «Քյնըմ եմ մի կործ ճարեմ, ապրեմ»։ Էտ մարթը ասըմ ա. «Ես էլ եմ ուղըմ տըհե մի կործ բթնեմ, աշխատեմ, արի՛ հընգյերանանք»։

Սըհա̈նք հընգերանըմ են, իրար հետ մի գո̈ւքյա̈ն են պա̈ց անըմ, առուտուր անըմ։ Կարճ ժա̈մա̈նակըմ սըհա̈նք էնքան հարըստանըմ են, վըեր էլ ասըիլու չի։ Մի օր էլ հընգյերը կյա̈լիս ա հընգյերին ասըմ ա. «Մի պա̈ն եմ մա̈ցել»։ Ասըմ ա. «Ի՞նչ, ասա՛ տըեհամ»։

Ասըմ ա. «Մըեր թաքավըրերին մի ախչիկ ունըի։ Տասնըութ տըրեկան ա տա̈ռել, համա հըլա̈ խոսըմ չի. Թաքավըրերը ասըել ա. «Ով իմ ըխչկանը խոսըցնի, իրան քաշովը մին վըեսկի կըտամ, ախչիկն էլ իրան փեշքեշ»։ Տու շահիլ ես, արի քեզ սովըրցնեմ, թե ինչ կասըես՝ վըեր նա̈ խոսա. Համ քու քաշովը վըեսկի կառնես, համ էլ էն սո̈ւրո̈ւն ըխչկա մարթը կըլես ու թաքավըրերի փեսա»։

Տըղեն ասըմ ա. «Ջէ՛, ախպեր, ես էտ թաքավըրերի-մաքավըրերի իրեսից եմ փախել, տանիցը տ̈ուս ընգյել, հըմի քյնա̈՞մ նըհանց կուշտը»։

Էս մարթը ասըմ ա. «Խի՞, ի՞նչ ա ըլել, վըեր»։ Տըղեն իրան կըլխի եկածը պատմըմ ա, թե վըենց ա իրան հոր հետ թաքավըրերի մըհար քյա̈ցել Ջալ ծո̈ւկը փըռնիլ, ինքը փռնել ա՝ ըլետ րրախել, հերը իրան տանիցը տ̈ուս ա արել։

Էտ մարթը ասըմ ա. «Էն հե՜չ, հըմի ես քեզ ինչ սվրցնեմ, կըքյնա̈ս կասըես, մըենք իրար հետ դենք քյնա̈լ։ Թաքավըրերին կասըենք էս հո̄նարը էրկուսով ենք քթել, պըետկ ա ամենքիս մըեր քաշովը վըեսկի տաս, նա̈ էլ ուզած-չուզած կըտա, կըպիջենք կես կանենք»։

Սըհա̈նք վըեր են կենըմ, քյնըմ թաքավըրերին կուշտը, ասըմ են, վըեր. «Մըենք կըխոսըցնենք, ամըենքիս մըեր քաշովը վըեսկի տու»։ Թաքավըրերը ասըմ ա. «Լա՜վ, կտամ»։ Տըղեն ասըմ ա. «Դե՜, ըխչկանըդ պի ըստի»։

Ըխչկանը պիրըմ ա ըստի, թաքավըրերն ու իրան կընիկը, վա̈ղիրն ու իրան կընիկը, իրան ախչիկը տըհե մի վեց, օխտը հոքի են։

Տըղեն ասըմ ա. «Մի պատմութին ասեմ, նոր սկսրեմ»։ Ասըմ են. «Ասա»։

Ասըմ ա. «Մի դո̄ւլդյա̈ր, մի դերձիկ, մի տերտեր իրար հետ ճամփա են քյնըմ։ Քյա̈ցել են քաղաք առտուր արել, տուն են կյա̈լի. կյա̈լիս են մի քոլըի միչի քշերը մընըմ են։ Ասըմ են՝ տղերք էկեք հերթով, հերթով պահակ կաղնենք մըշեվը լիսը՝ թե չէ վըեր չիմս էլ քնենք՝ կարող ա կյա̈ն, մեր ըլած-չլա̈ծը կյո̄ղնան։ Պըոտնիկը ասըմ ա՝ ես կկաղնեմ, տո̄ւք քընեցեք. վըեր քունըս տանըի՝ մըներիտ վըեկըկցնեմ։ Տերտերն ու դերձիկը քընըմ են, դո̄ւլգյա̈րը կրակ ա անըմ ու ղրաղին նստըմ ա։ Վըեր քունը տըա̈ն շատ զոռ ա անըմ, սա̈ վըեր ա կենըմ մի քյո̄թուկ պիրըմ կրակի ղրաղը, հուրաքը ծըեռն ունըմ, ըսկսըմ ա տաշիլը։ Տաշըմ ա ու մի լա̈վ փետա սուրո̄ւն ախչիկ ա շինըմ, էն ղոլեն կրղնըցնըմ. լիսաստղին մտիկ ա անըմ, տըենըմ ա՝ քշերը խելախ անց ա կըցել. քյնըմ ա դերձիկին ասըմ ա՝ վըե կա՛ց, մըխելի էլ տո̄ւ կաղնի, աչկս մի քիչ կպցնեմ։ Ինքը պըանվըմ ա, քընըմ։ Դերձիկը քընըկոլոլ տըենըմ ա հըրես մթնըմը մինը կաղնած, ասըմ ա. «Էտ ո՞վ ես»։ Սա̈ս չի հանըմ, ըլետ ասըմ ա. «Էտ ո՞վ ես»։ Ծեն չիկա։ Սա̈ վըեր մի քանի հետ ասըմ ա՝ ո՞վ ես, ո՞վ ես, ծեն չի հանըմ, կացինը ծըեռին փռնած մոտանըմ ա, վըեր ծեփի. մըհել տըենըմ ա, չէ շոր չի, փետ ա։ Կացինը վեր ա քցըմ, մոտանըմ ծըեռն ա տալըի, տըենըմ ա՝ փետից շինած ախչիկ ա։ Ասըմ ա. «Սա̈ անպայման դո̄ւլգյարն ա շինել. դե վըեր նա̈ սըհե շնորք ունըի, ես էլ պըետկ ա շոր հըքցնըեմ»։ Տա̈ էլ նստըմ ա ու ըսկսըմ ա էտ կրակի ղրաղին շոր կարիլը. կարըմ ա հքցնըմ ա, լա̈վ զըթա̈րըմ։ Մտիկ ա անըմ, տըենըմ ա՝ արթեն խելախ ժա̈մա̈-

նակ ա անց կրցել, քյնըմ ա տերտերին վըեր ա կցնըմ, ասըմ ա. «Տե՛ր հայր, վրեկաց մի քիչ էլ տու կաղնըի»: Դերձիկը քընըմ ա, տերտերն ա կաղնըմ: Սա̈ տըենըմ ա հրե մի կընիկ էն ղոլեն կաղնած, ասըմ ա. «Օրշնյա՛լ, մոտ արի, մի վախի, մոտ արի՝ խոսենք»: Ժա̈ժ չի կյալի: Վըեր մի իրեք հետ խոսըմ ա՝ տըենըմ ա ծրեն-ծուն չիկա, վըեր ա կենըմ մոտանըմ ա, մըլա̈վ մըտիկ ա անըմ, տըենըմ ա՝ փետից շինած օքմըի ա, շորեր կարած հըքցըրած: Ասըմ ա. «Հա՛, ուրեմն էս դո̈ւլդյա̈րի ու դերձիկի արած սյաներր կըլի, բա ես ի՞նչ անեմ»: Ավետարանը ծըեռն ա ունըմ ու սկսըմ ա կարթիլը, տրա̈ չորս ղոլովը պըտըտվիլը. «Օրշնյա՜լ աստված, սրա̈ն հոքի տուր, հոքի տուր...»: Էնքան կարթըմ ա, վրեր ինքն էլ ըղա̈րըմ ա՝ ըտի թոլ ըլըմ, մըհել աստու խնամքը հասնըմ ա՝ տա̈ հուքի ա առնըմ:

Հըմի մի էն դայդի սուրուն ախչիկ ա, էն ղայդի մի հուրի-փա̈րի ախչիկ ա, վրեր սըհե մըտիկ անըիլով՝ կշտանըմ չես: Էտա յիսանըմ ա. սըհա̈նք չորսն էլ նստըմ են հաց ուտըմ ու ճամփա էն ընդյնըմ: Վըեր կյա̈լիս են տըեղ հասնըմ՝ ամենքը իրանց տուն դեն բյնա̈լ. հըմի նա̈ ասըմ ա՝ էս ախչիկը իմն ա, նա̈ ասըմ ա՝ էս ախչիկր իմն ա, տերտերն էլ ասըմ ա՝ իմն ա: Տըհա̈նք վըեր շատ դըլմըդալ են անըմ, ասըմ են. «Տըղե՛րք, էկեք քյնա̈նք դատավըրերի կուշտը, մանդըրամասը ասենք, թե վրենց ա ըլել. ում կըտա՝ թող նա̈ էլ տանըի»:

— Հըմի թաքավըրերը ապրած կենա, վըեր դատավըրերը տու իր ըլել՝ ո՞ւմ կըտըիր:

Թաքավըրերի ախչիկն էլ տըզարած՝ էտ պատմութինը անդաչ ա արել:

Թաքավըրերը ասըմ ա. «Ի՞նչ խոսկ վըեր դո̈ւլդյա̈րին կըտըի»: Ախչիկր էն ղոլիցը ասըմ ա. «Ը՜, ը՜, ը՜»: Մըհել վըեր «ը՜» ա անըմ, բոխիցը մի մեծ պա̈ն ա վեր ընգյնըմ: Վա̈զիրն էլ ասըմ ա. «Ջէ՛, ես դերձիկին կըտի, վըեր նա̈ շոր չէր կարել, հու փետը խամ չըներ տա̈ռնա̈լ»: Ախչիկը ըետ էն ղոլիցը վըեր «բա̈՜» ա անըմ, ինչ վըեր կա՝ սաղ վեր ա տա̈ռնըմ ու ասըմ ա. «Ջէ՛, հայրիկ ջա՜ն. փետա ախչիկ շինիլն էլ ա հեշտ, շոր կարիլն էլ, հուքի տալն ա տըժա̈ր. ով ասըես՝ շոր կըկարի, ով ասըես՝ փետից մարթ կշինի, համա ո՞վ կարա հուքի տա, ախչիկը նրա̈նն ա, ով հուքի ա տըվել»:

Ու ըստեղ ախչիկը սկսըմ ա խոսալը: Թաքավըրերը ուրխանըմ ա, պիրըմ ա տըհանց ամըենքին իրանց քաշովը վըեսկի ա տալի

*ու ախչիկն էլ տալըիս ա էտ տղին։ Ըհա̈նք իրար հետ կյա̈լիս են. ըտի տըղեն էտ մարթին ասըմ ա. «Դե՛ արի վըեսկին կես ա-նենք»։ Ասըմ ա. «Չէ՛, տըղա ջա՛ն, ես ուզըմ չեմ. քեզ հալալ ըլի, տար չիմն էլ քեզ մըհար՝ անգաջղ դինջ ապրի, ես էն Ջալ ծո̄ւկն եմ, վըեր փռնեցիր, ըլետ ճուրը քցեցիր ու իմ ծըրենա քու հերը թակեց, տանըիցը տո̄ւս արավ քեզ»։ Ըհա̈նք փըթաթվըմ են ի-րար՝ պըչպըչորըմ, ու ծո̄ւկը կորչըմ ա։*

*Տըղեն վըեր ա ունըմ էտքան հարստությինը ու թաքավըերի ըխչկանը, կյա̈լիս ա իրանց տուն. ուտըմ, խմըմ, քյեփ են անըմ՝ օխտը օր, օխտը քշեր հըրսանիք անըմ։*

*Իրանք հասնըմ են իրանց մուրազին, տո̄ւք էլ հասնեք ծըեր մուրազին։*

